ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«21» մարտի 2024 թվական N 194-Լ

ք. Երևան

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 698-Լ որոշման հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության առջև ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի, գույքային իրավունքների և պարտավորությունների առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության դատարանների, ֆիզիկական, իրավաբանական անձանց կողմից ներկայացված հարցումների պատասխանները ստորագրելու իրավունքը վերապահել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության իրավաբանական վարչության պետին:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

3/21/2024

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ X **ԵՐԵՄ ՍԻՄՈՆՅԱՆ**

ԵՐԵՄ ՍԻՄՈՆՅԱՆ

Signed by: SIMONYAN YEREM 2409680135